Հուլիս, 2026

Պատմության թեստ

Հրահանգ

Ձեր առջև քննական թեստի էլեկտրոնային բուկլետն է:

Ուշադիր ծանոթացեք թեստի յուրաքանչյուր առաջադրանքին, լավ ըմբռնեք յուրաքանչյուր առաջադրանքի պահանջը, այնուհետև սկսեք աշխատանքը:

Թեստի առավելագույն միավորն է՝ 55:

Թեստի աշխատանքի համար տրամադրվում է 4 ժամ:

Մաղթում ենք հաջողություն

Հաջորդ էջին անցնելու կամ ետ վերադառնալու համար
կարող եք կիրառել ստեղնաշարի կոճակները:

Հրահանգ №1-22 առաջադրանքների համար:

Յուրաքանչյուր հարցին կից տրված է չորս ենթադրական պատասխան: Դրանցից միայն մեկն է ճիշտ: Ձեր կողմից ընտրված պատասխանը նշելու միակ ճանապարհը պատասխանների թերթիկի համապատասխան վանդակում X նշան դնելն է: Ոչ մի այլ նշում, հորիզոնական կամ ուղղահայաց գծեր, շրջագծում և այլն, չի ընկալվում էլեկտրոնային ծրագրի կողմից: Եթե ցանկանում եք ուղղել պատասխանների թերթիկում նշած պատասխանը, ապա ամբողջությամբ ներկեք այն վանդակը, որտեղ դրել եք X նշանը, որից հետո նշեք պատասխանի նոր տարբերակը (դրեք X նշանը նոր վանդակում): Կրկին անգամ ընտրել այն պատասխանը, որն արդեն ուղղել եք հնարավոր չէ: Յուրաքանչյուր առաջադրանք գնահատվում է 1 միավոր:

(1) 1. Ո՞ր դարաշրջանին է պատկանում Թրիալեթիի մշակույթը:

ա) Պալեոլիթի,

բ) նեոլիթի,

գ) միջին բրոնզի,

դ) վաղ երկաթի:

(1) 2. Ո՞վ է քանդել Սոլոմոն թագավորի կողմից Երուսաղեմում կառուցված տաճարը:

ա) Ասորեստանի թագավոր Թիգլաթպալասարը,

բ) Աքքադի թագավոր Սալմանասարը,

գ) Պարսկաստանի թագավոր Դարեհը,

դ) Բաբելոնի թագավոր Նաբուգոդոնոսորը:

(1) **3. Ո՞վ էր Հին Չինաստանում գործունեություն վարող Կոնֆուցիոսը:**

ա) Գիտնական, որը հիմնադրել է փիլիսոփայական շարժումը,

բ) զինվորական առաջնորդ, որը գրել է պատերազմների մասին առաջին ձեռնարկը,

գ) պետական պաշտոնյա, որն առաջինն է կարողացել միավորել յոթ թագավորությունները,

դ) վաճառական, որն իր ճանապարհորդությունների արդյունքում ստեղծել է Չինաստանի այն ժամանակվա լավագույն քարտեզը:

(1) **4. Հունական գաղութացման վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ:**

ա) Հիմնական պատճառներից էր սակավահողությունն ու բնակչության թվի աճը, ինչը հանգեցնում էր ճգնաժամի, որի լուծումը նոր տարածքների բնակեցումն էր,

բ) հիմնական պատճառը պոլիսներում անընդհատ տեղի ունեցող քաղաքացիական պատերազմներն էին, որից հետո դատարանը պարտվողներին պատժում էր աքսորով,

գ) ամենակարևոր պատճառը հունական տնտեսության առանձնահատկության մեջ էր կայանում, որն ամբողջովին ստրուկների աշխատանք էր պահանջում, իսկ ստրուկներին հնարավոր էր բերել միայն այլ երկրներից,

դ) վճռորոշ պատճառը հունական պոլիսների ագրեսիվ ռազմական քաղաքականությունն էր, համաձայն որի տարբեր շրջաններում պահանջվում էր ստեղծել կարևոր ռազմական բազաներ:

(1) **5. Ըստ «Քարթլիի կյանքի»՝ թագը Փառնավազին ուղարկել էր Անտիոքոս թագավորը: Ո՞ր պետության կառավարիչն էր Անտիոքոսը:**

ա) Աքեմենյանների,

բ) Սելևկյանների,

գ) Նաբոնյանների,

դ) Սասանյանների:

(1) 6. Ի՞նչ պաշտոն էին զբաղեցնում Գրակքոս եղբայրները Հռոմեական Հանրապետությունում:

ա) Հյուպատոսի,

բ) մեծ պոնտիֆեքսի,

գ) ցենզորի,

դ) ժողովրդական տրիբունի:

(1) **7. Ո՞ր պատմիչն է հաղորդում տեղեկություններ Լազիկայում տեղի ունեցած «Էգրիսիի Մեծ պատերազմի» մասին:**

ա) Դիոն Կասսիոսը,

բ) Տակիտոսը,

գ) Պրոկոպիոս Կեսարացին,

դ) Ապպիանոսը:

(1) 8. Ո՞ր վանքն է կառուցվել միացյալ Վրաստանի առաջին թագավոր Բագրատ III-ի օրոք:

ա) Բեդիայի,

բ) Աթենիի Սիոնի,

գ) Զարզմայի,

դ) Ալավերդու:

(1) **9. Ո՞ր պնդումն է ճիշտ Վենետիկի դոժ Էնրիկո Դանդոլոյի մասին:**

ա) Նա աջակցում էր Իտալիայի միացյալ թագավորության ստեղծմանը և այդ նպատակով մեծ գումարներ հավաքելով վարձեց լավագույն զինվորական հրամանատարներին, ովքեր հասան նշանակալի հաջողությունների:

բ) Նա արդյունավետորեն օգտվեց ստեղծված իրավիճակից՝ ստիպելով խաչակիրներին փոխել իրենց սկզբնական ծրագիրը և ուղղելով նրանց ռազմական ուժը Բյուզանդիայի դեմ:

գ) Նա Լոմբարդյան լիգայի ստեղծման նախաձեռնողն էր և այդ ճանապարհով փորձում էր պաշտպանել Հարավային Իտալիան Գերմանիայի թագավորի ագրեսիայից, ինչը նրան հաջողվեց անել որոշակի ժամանակահատվածում:

դ) Նա գտնում էր, որ միջմայրցամաքային առևտուրը պետք է լինի միայն անկախ քաղաք-պետությունների ձեռքում, ուստի ձգտում էր ակտիվորեն համագործակցել Հանզայական միության հետ Օսմանյան պետության դեմ:

(1) **10. Մոնղոլական արշավանքների վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ:**

ա) Մեծ խան ընտրվելուց հետո Խուբիլայը Արաբական խալիֆայությունն ընտրեց որպես մոնղոլական արշավանքների գլխավոր թիրախ և մի քանի արյունալի պատերազմ մղեց խալիֆի դեմ, թեև անհաջող:

բ) Չինգիզ խանի մահից հետո մոնղոլական արշավանքների նոր փուլը Բաթու խանի հետ է կապված, որը մեծ հաջողությունների հասավ և ասպատակեց նաև Արևելյան Եվրոպայի հողերը:

գ) Բերքա խանի ժառանգորդ Մանգու խանն իրականացրեց ռազմական բարեփոխում, որի արդյունքում հենց առաջին արշավանքի ժամանակ նրան հաջողվեց ենթարկեցնել Չինաստանի կայսրությունը:

դ) Իր իշխանությունն ամրապնդելուց հետո Հուլագու խանը մի քանի հաջող արշավանքների արդյունքում նվաճեց Հնդկաստանը և հիմք դրեց կառավարիչների նոր դինաստիային:

(1) **11. Ի՞նչն է կոչվում Ժակերիա:**

ա) Գյուղացիական մեծ ապստամբությունը Ֆրանսիայում Հարյուրամյա պատերազմի ժամանակ,

բ) ռեֆորմացիոն շարժումը Շվեյցարիայում Աուգսբուրգի հաշտությունից հետո,

գ) Հարավային Եվրոպայի քաղաքների միավորումը Վերածննդի դարաշրջանում,

դ) ֆեոդալների դուրս գալը Սրբազան Հռոմեական կայսրության կայսրի դեմ Երեսնամյա պատերազմի ժամանակ:

(1) **12. Եվրոպայի ո՞ր միապետի հետ ուներ դիվանագիտական հարաբերություններ Վրաստանի թագավոր Գիորգի V Պայծառը:**

ա) Լեհաստանի թագավոր Կազիմիր III Մեծի հետ,

բ) Անգլիայի թագավոր Էդուարդ I Երկարատոքի հետ,

գ) Ֆրանսիայի թագավոր Ֆիլիպ VI Հաջողակի հետ,

դ) Սրբազան Հռոմեական կայսրության կայսր Լյուդվիգ IV Բավարիացու հետ:

(1) **13. Ո՞վ էր Մոնտեսուման:**

ա) Ինկերի ապստամբության առաջնորդը, որը պարտության մատնեց կոնկիստադորներին և վտարեց նրանց Պերուից,

բ) Մայա ցեղի առաջին քուրմը, որը կոնկիստադորների պահանջով ընդունեց քրիստոնեություն,

գ) Տոլտեկների կայսրը, որը գերեվարվեց կոնկիստադորների կողմից և ուղարկվեց Եվրոպա՝ Հռոմի պապի մոտ,

դ) Ացտեկների վերջին կառավարիչը, որը պարտվեց կոնկիստադորների դեմ ճակատամարտում:

(1) **14. Քարթլիի թագավոր Լուարսաբ II-ի մասին ո՞ր տեղեկատվությունն է ճիշտ:**

ա) Նա ստիպված էր ենթարկվել շահի պահանջին և հրաժարվել քրիստոնեությունից՝ գահ բարձրանալու դիմաց,

բ) գերության մեջ գտնվելու ընթացքում նա հրաժարվեց իսլամ ընդունելուց և սպանվեց շահի հրամանով,

գ) դավադրությունը բացահայտվելուց հետո նա որոշեց գնալ շահի մոտ և այդ քայլով մեղմել նրա զայրույթը,

դ) նա չվստահեց իրեն մահապատժի չենթարկելու վերաբերյալ շահի խոստումին և պատսպարվեց Մթիուլեթիում:

(1) **15. Ո՞ր պնդումն է ճիշտ Իմերեթիի թագավոր Սոլոմոն I-ի մասին:**

ա) Գահ բարձրանալուց անմիջապես հետո նրա դեմ դուրս եկավ սեփական պապը՝ Լևան Աբաշիձեն, որը զոհվեց Ռուխիի ճակատամարտում: Այս ճակատամարտում հաղթանակ տանելուց հետո Դաղիանիին հպատակեցնելը թույլ տվեց նրան տարածել իր իշխանությունը նաև Աբխազիայի իշխանությունում:

բ) Օսմանյան կայսրության վասալ Ախալցիխեի փաշայի դեմ պայքարում նա օգնություն խնդրեց Մեսխեթիի ազդեցիկ թավադներից՝ Ջաղելիներից: Նրանց աջակցությամբ նա հաղթանակ տարավ Նաճիշկրևիի ճակատամարտում և դադարեց տուրք վճարել սուլթանին:

գ) Իանեթիի ճակատամարտում հաղթանակ տանելուց հետո նա ենթարկեցրեց Գուրիելիին՝ այդպիսով ճանապարհ բացելով դեպի Աջարիա: Տեղական ֆեոդալների՝ Խիմշիաշվիլիների օգնությամբ նա կարողացավ այս տարածքից որոշ ժամանակով վտարել նաև օսմաններին:

դ) Գահ բարձրանալուց անմիջապես հետո նա պայքար սկսեց գերեվաճառության դեմ և փաստացիորեն կասեցրեց այդ գործընթացը: Խրեսիլիի ճակատամարտում տարած հաղթանակով նպաստեց թագավորական իշխանության ուժեղացմանը:

(1) **16. Ո՞ր պետությունում հաջողության հասավ հեղափոխությունը 1848 թվականին, որի արդյունքում փոխվեց կառավարման ձևը:**

ա) Ավստրիայում,

բ) Իտալիայում,

գ) Պրուսիայում,

դ) Ֆրանսիայում:

(1) **17. Ո՞րն էր արդյունաբերական հեղափոխության արդյունքներից մեկը:**

ա) Արդյունաբերական արտադրանքի գների անկումը,

բ) մանուֆակտուրաների թվի կտրուկ աճը,

գ) գյուղատնտեսական արտադրանքի պահանջարկի նվազումը,

դ) ֆիզիկական աշխատանքի կարևորության աճը:

(1) **18. Ո՞վ էր 1879 թվականին հիմնադրված «Վրացիների շրջանում գրագիտություն տարածող ընկերության» առաջին նախագահը:**

ա) Դիմիտրի Ղիփիանին,

բ) Թեդո Ժորդանիան,

գ) Էքվթիմե Թաղաիշվիլին,

դ) Զաքարիա Ճիճինաձեն:

(1) **19. Ո՞ր հայտնի վրացի գիտնականն էր ընդգրկված Փարիզի խաղաղության վեհաժողով ուղարկված Վրաստանի պատվիրակության կազմում:**

ա) Զուրաբ Ավալիշվիլին,

բ) Վիկտոր Նոզաձեն,

գ) Ակակի Շանիձեն,

դ) Միխակո Ծերեթելին:

(1) **20. 1919-1921 թվականներին Վրաստանի Հանրապետության Հիմնադիր ժողովում ո՞ր կուսակցությունն էր հանդիսանում աջակողմյան ընդդիմություն:**

ա) Անարխո-սինդիկալիստական կուսակցությունը,

բ) ազգային-դեմոկրատական կուսակցությունը,

գ) սոցիալիստ-հեղափոխականների կուսակցությունը,

դ) սոցիալիստ-ֆեդերալիստների կուսակցությունը:

(1) **21. Ո՞ր իրադարձությունը *կապված չէ* Սառը պատերազմի ժամանակաշրջանի հետ:**

ա) Գերմանիայի բաժանումը երկու մասի,

բ) Խորհրդա-ֆիննական պատերազմը,

գ) Թրումենի դոկտրինը,

դ) Կորեական պատերազմը:

(1) **22. ԱՄՆ-ի նախկին նախագահներից ո՞ր մեկն էր այցելել Վրաստան՝ 1991 թվականի մարտի 31-ին անցկացված հանրաքվեին մասնակցելու համար:**

ա) Հենրի Ֆորդը,

բ) Ռոնալդ Ռեյգանը,

գ) Ջիմի Քարթերը,

դ) Ռիչարդ Նիքսոնը:

Հրահանգ № 23-26 առաջադրանքների համար

Ժամանակագրական կարգով դասավորեք պատմական իրադարձություններն ու անձանց: Պատասխանները գրառեք պատասխանների թերթիկի վրա հատկացված վանդակներում: Հաշվի առեք, որ վանդակում գրվում է միայն նշված իրադարձության համապատասխան թվանշանը: Առաջին վանդակում գրվում է այն թվանշանը, որով նշված է բոլորից վաղ տեղի ունեցած իրադարձությունը և այլն: Հետևաբար, վերջին երրորդ վանդակում կգրվի այն թվանշանը, որով նշված է բոլորից ուշ տեղի ունեցած իրադարձությունը: Յուրաքանչյուր առաջադրանք գնահատվում է 1 միավոր:

(1) 23. ժամանակագրական կարգով դասավորեք Բյուզանդիայի կառավարող դինաստիաները.

1. Իսավրյան դինաստիա
2. Անգելոսների դինաստիա
3. Պալեոլոգոսների դինաստիա

(1) **24. ժամանակագրական կարգով դասավորեք վրացական սրբախոսական (հագիոգրաֆիկ) ստեղծագործությունները՝ ըստ դրանց ստեղծման ժամանակի.**

1. Էվստատի Մցխեթացու (Մցխեթելիի) մարտիրոսությունը
2. Գրիգոլ Խանձթելիի կյանքը
3. Աբո Թիֆլիսեցու (Թբիլելիի) նահատակությունը

(1) **25. ժամանակագրական կարգով դասավորեք Նապոլեոն III-ի կառավարման ժամանակաշրջանի ճակատամարտերը.**

1. Սևաստոպոլի
2. Սեդանի
3. Մաջենտայի

(1) **26. ժամանակագրական կարգով դասավորեք գրական ստեղծագործությունները՝ ըստ դրանցում ներկայացված պատմական իրադարձությունների ժամանակի ընթացքի.**

1. «Ում մահն է գուժում զանգը»
2. «Իննսուներեքը»
3. «Արևմտյան ճակատում նորություն չկա»

Հրահանգ № 27 առաջադրանքի համար:

Աշակերտին տրված է քարտեզ: Սեփական գիտելիքների և քարտեզի վրա առկա տեղեկատվության միջոցով նա պետք է պատասխաներ տրված հարցերին: Աշակերտի տրված պատասխաններից չորսը (4) սխալ է: Դուք պետք է գտնեք բոլոր չորս սխալներն, արտագրեք դրանք պատասխանների թերթիկի համապատասխան տեղում և նույն տեղում ավելացնեք ճիշտ պատասխանները: Առաջադրանքի առավելագույն միավորն է՝ 4:

Առաջադրանք 27. Քարտեզն ու հարցերը տե՛ս հաջորդ էջերում

Հարցերը տե՛ս հաջորդ էջում

Աշակերտին ուղղած հարցերը.	Աշակերտի տված պատասխանները.
27.1. Համաձայն քարտեզի՝ անվանե՛ք Բալկանյան թերակղզում գտնվող այն պետությունները, որոնք չեն տուժել կարմիր սլաքով նշված արշավանքից:	27.1. Հունգարիան, Բուլղարիան
27.2. Համաձայն քարտեզի՝ ո՞ր պետության կազմում էր ընդգրկված քաղաք Երուսաղեմը:	27.2. Կիպրոսի
27.3. Ո՞ր նավահանգստից ճանապարհ ընկան քարտեզի վրա կարմիր սլաքով նշված արշավանքի մասնակիցները և ո՞ր քաղաքը նվաճեցին ճանապարհին:	27.3. Վենետիկից, Աթենքը
27.4. Քարտեզի վրա նշված ո՞ր կոնկրետ տվյալի հիման վրա կարող ենք եզրակացնել, որ Վրաց թագավորության կազմի մեջ մտնում էին նաև հայկական հողեր:	27.4. Անին գտնվում է Վրաստանի պետության սահմաններում
27.5. Անվանե՛ք քարտեզի վրա նշված Միջերկրական ծովի արևելյան ափին գտնվող այն պետությունները, որոնք ստեղծվել են եվրոպացիների արշավանքների արդյունքում:	27.5. Երուսաղեմ, Կիլիկիա, Անտիոք

Հրահանգ № 28 առաջադրանքի համար:
Ուշադիր վերլուծե՛ք նկարի տեղեկատվությունը և պատասխանե՛ք տրված հարցերին: Պատասխանները գրառե՛ք պատասխանների թերթիկի համապատասխան տեղում: Առաջադրանքի առավելագույն միավորն է 7:

Առաջադրանք 28. Նկարներն ու հարցերը տե՛ս հաջորդ էջերում

N1

N2

Նկարների վրա արված գրություններ.

№1 – Ազգերի լիգա, №2 – Վերսալյան պայմանագիր:

հարցերը տե՛ս հաջորդ էջում

Հարցեր.

(2) 28.1. Անվանե՛ք №1 նկարում պատկերված անձին: Հաշվի առնելով պատմական համատեքստը՝ ո՞րն է այս նկարի հիմնական գաղափարը: Բերեք փաստարկ՝ ձեր տեսակետը հիմնավորելու համար:

(2) 28.2. Անվանե՛ք №2 նկարում պատկերված անձին: Հաշվի առնելով պատմական համատեքստը՝ ո՞րն է այս նկարի հիմնական գաղափարը: Բերեք փաստարկ՝ ձեր տեսակետը հիմնավորելու համար:

(2) 28.3. Անվանե՛ք Վերսալյան պայմանագրի երկու կոնկրետ պայման, որոնց միջոցով աշակերտներին կկարողանաք բացատրել, թե ինչու №1 նկարում պատկերված իրավիճակը փոխվեց №2 նկարում պատկերված իրավիճակի:

(1) 28.4. Բերեք փաստարկ՝ հիմնավորելու համար այն պնդումը, որ երկրորդ նկարը ստեղծվել է XX դարի 30-ական թվականներին:

Հրահանգ №29 առաջադրանքի համար:
Ուշադիր ընթերցե՛ք ստորև բերված պատմական փաստաթուղթը, ըմբռնե՛ք տեքստը և պատասխանե՛ք հարցերին: Պատասխանները գրե՛ք պատասխանների թերթիկի համապատասխան տեղում: Առաջադրանքի առավելագույն միավորն է 18:

Առաջադրանք 29. Պատմական փաստաթուղթն ու հարցերը տե՛ս հաջորդ էջերում

Ակակի Չխենկելիի նամակը Նոե Ժորդանիային

Իմ կարծիքն արդարացվեց: Այս պահին մենք չպետք է օսմաններից օգնություն ակնկալենք: Սամի բեյին այստեղ տեսնելով անմիջապես բարձրացրի այդ թեման և նա վճռական կերպով հայտարարեց հետևյալը. «Ներկա պահին մենք չենք կարող ներգրավվել Մոսկվայի դեմ պատերազմին: Դա հնարավոր կլինի միայն Եվրոպայի հետ մեզ համար բարենպաստ պայմաններով խաղաղության պայմանագիր կնքելուց հետո: Նպատակը, սակայն, նույնն է մնում՝ ազատագրել Կովկասը ռուսական տիրապետությունից, և հուսով եմ, որ ձեզ հետ միասին հնարավորինս շուտ կսկսենք այն իրականացնելու գործընթացը»:

Սամի բեյն ինձ վստահեցնում է, որ օսմանները մեր հողի ոչ մի թիզ չեն ուզում: Նա նույնիսկ իբր այդ բնույթի հեռագիր է ուղարկել Անգորա: Երեկ եկավ ինձ մոտ և ասաց, որ արդեն պատասխան է ստացել. «Մեր բանակը Բաթումի է մտել ձեր կառավարության հետ համաձայնությամբ: Ձեր պաշտոնյաները կմնան այնտեղ, ինչպես նաև ձեր ղեկավարությունը, իսկ ավելի ուշ մարզում կանցկացվի պլեբիսցիտ (հանրաքվե)»: Երբ ես նրան հարցրի, թե ինչպես է մտադիր մարզն անջատել քաղաքից, նա պատասխանեց. «մենք չենք յուրացնում ո՛չ քաղաքը, ո՛չ մարզը, մենք պարզապես ցանկանում ենք, որ երկուսին էլ ինքնավարություն շնորհվի»:

Դեռ այստեղ է Սամի բեյը, հենց նա մեկնի, ես նրա հետ միասին կուղևորվեմ Փարիզ:

Իմ գիծը հետևյալն է՝ փոխադարձ համաձայնություն օսմանների հետ Կովկասի ազատագրման նպատակով, Լոնդոնի և Փարիզի այս կամ այն կերպ

Տեքստի շարունակությունը տե՛ս հաջորդ էջում

Անցնել հարցերին՝ 1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12

մասնակցությունը կամ երաշխիքը այդ համաձայնությունն իրականացնելու համար և 1914 թվականի ռուս-օսմանյան սահմանները: Փարիզում դրան հասնել հեշտ չի լինի: Օսմանն ինքը կզգա, և չի կարող չզգալ, որ իրական վտանգ նրան Մոսկվայից է սպառնում, բայց այդ ժամանակը դեռ չի եկել:

Լոնդոնում աշխատելը չափազանց դժվարացել է, գործի նույնիսկ հիմնաքարը դրված չէ: Հիմնական պատճառը Ռուսաստանի հետ պայմանագիր կնքելու մտադրությունն է, որը որոշ չափով հետաձգվեց Պետրոգրադ-Կրոնշտադտում տեղի ունեցած անկարգությունների պատճառով: Մերձավոր Արևելքում տեղի ունեցող անկարգությունները նույնպես խոչընդոտներ են ստեղծում: Ես հանդիպել եմ Արտաքին գործերի նախարարության որոշ պաշտոնյաների հետ: Նրանք սահմանափակվեցին միայն կարեկցանքով: Մնացած ամեն ինչին լռությունն են նախընտրում: Այսօր նշանակված հանդիպում ունեի Քերզոնի հետ, բայց նա ինձ տեղեկացրեց, որ իրեն նիստի են կանչել Լորդերի պալատ, և որ շուտով կտեղեկացնի մեր հանդիպման ժամանակը: Պետք է սպասեմ, քանի որ հավատարմագրի պատճենը չեմ ներկայացրել: Չգիտեմ՝ կընդունեն արդյոք ինձ այնպես, ինչպես ընդունեցին Փարիզում:

Մենք անպատճառ պետք է օգտվենք ֆրանսիացիներից, անհրաժեշտության դեպքում՝ նաև իտալացիներից, սակայն գլխավորն ու վճռորոշը, միևնույն է, մնում է Անգլիան: Ուստի, մենք չպետք է բաց թողնենք ոչ մի հնարավորություն Անգլիային մեզնով հետաքրքրելու համար:

Անցնել հարցերին՝ 1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12

Տեքստի շարունակությունը տե՛ս հաջորդ էջում

Ես չգիտեմ, թե ինչ իրավիճակ է ռազմաճակատում, բայց երբ դուք սա ստանաք, հավանաբար արդեն Վրաստանի տարածքում չեք լինի կանգնած: Այստեղ շատ բան է գրվել մեր զորքերի հերոսության մասին, նախարարություններում, ինչպես նաև զինվորականները հիանում ու գովաբանում մեզ: Նրանք ընդգծում են, որ ամբողջ Կովկասում միայն վրացիներն են հանդես եկել որպես իսկական հայրենասերներ, ովքեր կատաղի դիմադրություն են ցուցաբերում ծովատարած թշնամուն, և որ Մեծ Ռուսաստանի դեմ նույնիսկ մեկ ամիս դիմադրելը, այն դեպքում, երբ մեզ չեն խնայել օսմաններն ու մյուս հարևաններ, արդեն իսկ մեծ սխրանք է:

Անցնել հարցերին՝ 1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12

Մենք քիչ տեղեկություններ ունենք: Մի քանի թերթ ենք ստացել, այն էլ հին համարներ, բայց ես միևնույն է որոշ բաներ գիտեմ: Ձենքի մասին ոչինչ չեմ գրում, որովհետև դուք էլ գիտեք, որ մենք արեցինք այն ամենը, ինչ կարող էինք:

Կառավարությունը, որպես այդպիսին, ոչ մի դեպքում չպետք է լուծարվի. կառավարության նստավայրը պետք է լինի Ստամբուլը: Հիմա ես ավելի շատ եմ հավատում մեր ազատության գործին: Յուրաքանչյուր ոք, ում մեջքին այնպիսի ժողովուրդ է կանգնած, ինչպիսին վրաց ազգն է, երբեք չի կորցնի իր հավատը:

17 մարտ, 1921 թվական

Ակակի Չխենկելի, Գործնական նամակներ, զրույցի գրառումներ և արձանագրություններ, Թբիլիսի, 2024:

հարցերը տե՛ս հաջորդ էջերում

Հարցեր.

(1) **29.1.** Սամի բեյի կարծիքով՝ ի՞նչ պայման էր անհրաժեշտ Օսմանյան կայսրությանը Ռուսաստանի դեմ պատերազմի մեջ ներգրավվելու համար:

(1) **29.2.** Սամի բեյը հեռագիր ուղարկեց Անգորա: Ո՞վ էր այդ ժամանակ Անգորայի կառավարության ղեկավարը:

(1) **29.3.** Համաձայն փաստաթղթի՝ ի՞նչն էին առանձնահատուկ կերպով ընդգծում անգլիացի զինվորականներն ու նախարարությունների աշխատակիցները:

(1) **29.4.** Բրիտանիայի նախարարների կաբինետում ի՞նչ պաշտոն էր զբաղեցնում փաստաթղթում հիշատակված լորդ Քերզոնը 1921 թվականի մարտին:

Անցնել փաստաթղթի տեքստի 1-ին էջին
Անցնել փաստաթղթի տեքստի 2-րդ էջին
Անցնել փաստաթղթի տեքստի 3-րդ էջին

(1) **29.5.** Փաստաթղթում առկա ո՞ր տեղեկատվությունն է հաստատում, որ Ակակի Չխենկելին պաշտոնական դիվանագիտական առաքելություն էր իրականացնում Եվրոպայում:

(1) **29.6.** Համաձայն փաստաթղթի՝ ո՞ր եվրոպական պետությունների հետ հարաբերությունների վրա էր հույս դնում Ակակի Չխենկելին:

(2) **29.7.** Ըստ Ակակի Չխենկելիի՝ ո՞ր երկու պայմաններն էին անհրաժեշտ ապագայում Օսմանյան կայսրության հետ համաձայնության գալու համար:

(2) **29.8.** Լրիվությամբ թվարկեք՝ Ակակի Չխենկելիի կարծիքով՝ ի՞նչն էր խանգարում նրա աշխատանքին Լոնդոնում, «գործի հիմնաքարը դրված չլինելուց» բացի:

Անցնել փաստաթղթի տեքստի 1-ին էջին
Անցնել փաստաթղթի տեքստի 2-րդ էջին
Անցնել փաստաթղթի տեքստի 3-րդ էջին

(2) **29.9.** Համաձայն փաստաթղթի՝ ի՞նչ էր ծրագրում իրականացնել Անգորայի կառավարությունը Բաթումիում և Բաթումիի մարզում, և ո՞րն էր նրանց նպատակը այս տարածքում:

(2) **29.10.** Ըստ Ակակի Չխենկելիի՝ որտե՞ղ պետք է շարունակեր իր գործունեությունը վտարանդի կառավարությունը և հաշվի առնելով պատմական համատեքստը, ձեր կարծիքով, ինչո՞ւ ընտրվեց այս քաղաքը:

(2) **29.11.** Ակակի Չխենկելիի կողմից նամակը գրելուց մեկ օր առաջ՝ մարտի 16-ին Մոսկվայում կնքվեց պայմանագիր, որը կարևոր էր նաև Վրաստանի համար: Ո՞ր կողմերի միջև է կնքվել այդ պայմանագիրը, և ինչո՞ւ էր այն կարևոր Վրաստանի համար:

(2) **29.12.** Համաձայն փաստաթղթի՝ ո՞րն էր Ակակի Չխենկելիի համար տեղեկություններ ստանալու աղբյուրներից մեկը և ո՞րն էր այդ աղբյուրի թերությունը:

Անցնել փաստաթղթի տեքստի 1-ին էջին
Անցնել փաստաթղթի տեքստի 2-րդ էջին
Անցնել փաստաթղթի տեքստի 3-րդ էջին